# Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի կողմից իրականացված իրավական աջակցության ընթացիկ հաշվետվություն

**հունվար-սեպտեմբեր, 2012 թ.**

## *1. Իրավախորհրդատվություն*

2012 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսների ընթացքում Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի (ՀՔԱ Վանաձորի գրասենյակ) կողմից իրավախորհրդատվություն է տրամադրվել 367 քաղաքացու, որից 255 քաղաքացու իրավաբանական խորհրդատվություն տրամադրվել է բանավոր ընթացակարգով, իսկ 112 քաղաքացու գործ շարունակվել է գրավոր ընթացակարգով:




Հարկ է նշել, որ իգական սեռի քաղաքացիները ավելի հաճախ են դիմում իրենց իրավունքների պաշտպանության համար, քան արական սեռի ներկայացուցիչները: Այսպես, սույն թվականի հունվար-սեպտեմբեր ժամանակահատվածում ՀՔԱ Վանաձորի գրասենյակ դիմած 367 քաղաքացիներից 235-ը իգական սեռի ներկայացուցիչ են:



59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am
Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ` hcav@hcav.am

**Քանակական տվյալներ ըստ խորհրդատվության բնույթի**




*ՀՔԱ Վանաձորի գրասենյակ իրավախորհրդատվություն ստանալու համար դիմած քաղաքացիների տարիքը*




2012 թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին 367 քաղաքացիներ կազմակերպություն դիմել են հետևյալ իրավունքների խախտումներով[1].

| | | |
|---|---|---|
| 1. | սեփականության իրավունք | 140 |
| 2. | սոցիալական ապահովության իրավունք | 60 |
| 3. | արդար դատաքննության | 54 |
| 4. | ընտանեկան իրավունք | 38 |
| 5. | զորակոչիկների իրավունքներ | 25 |
| 6. | արտահայտվելու/տեղեկատվության ազատություն | 18 |
| 7. | աշխատանքային իրավունք | 15 |
| 8. | առողջության պաշտպանվածության իրավունք | 8 |
| 9. | սպառողների իրավունքներ | 7 |
| 10. | խոշտանգումներից և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու իրավունք | 4 |
| 11. | ազատության և անձնական անձեռմխելիության իրավունք | 3 |
| 12. | տեղաշարժի ազատություն | 2 |
| 13. | անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունք | 2 |
| 14. | քաղաքացիություն ստանալու իրավունք | 1 |
| 15. | կրթության իրավունք | 1 |
| 16. | ապահովագրական իրավունք (ԱՊՊԱ) | 1 |
| 17. | կյանքի իրավունք | 1 |
| 18. | այլ | 8 |
| 19. | ընդամենը | 388 |

[1] Որոշ քաղաքացիների գործերով խախտվել է մի քանի իրավունք:



59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am
Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am

Հարկ է նշել, որ քաղաքացիները առավել հաճախ դիմում են սեփականության, սոցիալական ապահովության և արդար դատաքննության իրավունքների խախտման դեպքերով, սակայն սա չի նշանակում, որ օրինակ խոշտանգումների և անմարդկային վերաբերմունքից զերծ մնալու կամ ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքները հազվադեպ են խախտվում Հայաստանի Հանրապետությունում: Խնդիրը կայանում է նրանում, որ որոշ իրավունքների խախտումներ առավել դժվար են բացահայտվում, իսկ զոհերը, որպես կանոն, խուսափելով հետագա կրկնակի ճնշումներից, հաճախ հրաժարվում են իրենց խախտված իրավունքների վերականգնումից: Որոշ դեպքերում քաղաքացիները ոստիկանության կողմից գործադրվող ճնշումների ազդեցության տակ ոչ միայն հրաժարվում են իրենց կողմից ՀՔԱ Վանաձորի գրասենյակին տրամադրված տեղեկատվությունից, այլև մեղադրում են կազմակերպությանը իրենցից սպառնալիքով տեղեկատվություն կորզելու մեջ[2]:

Այսպես, 2012 թ. օգոստոսի 18-ին ՀՔԱ Վանաձորի գրասենյակ դիմած քաղաքացին հայտնել է, որ ինքը օգոստոսի 17-ին բերման է ենթարկվել Ոստիկանության Լոռու մարզային վարչության Վանաձորի բաժնի քրեական հետախուզության բաժին և հարցաքննվել է ծեծկռտուքի մասնակցության կասկածանքով: Քաղաքացին հայտնել է, որ ոստիկանության աշխատակիցների կողմից իր նկատմամբ կիրառվել է ծեծ, սպառնալիքներ, սեռական բնույթի հայհոյանքներ: Կազմակերպության կողմից հանցագործության մասին հաղորդում է ներկայացվել ՀՀ հատուկ քննչական ծառայություն և ՀՀ գլխավոր դատախազություն: Հաղորդման վերաբերյալ ՀՀ հատուկ քննչական ծառայության կողմից կայացվել է որոշում՝ քրեական գործի հարուցումը մերժելու մասին:

2012 թ. օգոստոսի 22-ին ոստիկանության աշխատակիցների կողմից գործադրված հոգեբանական ճնշումների արդյունքում քաղաքացին ՀՀ հատուկ քննչական ծառայությունում (ՀՔԾ) բացատրություն է տվել այն մասին, որ

[2] http://hcav.am/events/ինչ-է-սարքվում-իրավապաշտպանի-դեմ



59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am
Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am

օգոստոսի 18-ին իր կողմից ներկայացված հանցագործության մասին հաղորդման մեջ նշված հանգամանքները չեն համապատասխանում իրականությանը:

Մեկ օր անց քաղաքացին դիմում է ներկայացրել ՀՀ ՀՔԾ-ի պետին այն մասին, որ նախօրեին իր կողմից տրված բացատրությունը եղել է ճնշումների ազդեցության տակ: Ներկայումս գործը գտնվում է վերաքննիչ դատարանում:

***2012 թ. հունվար -սեպտեմբեր ժամանակահատվածում կազմակերպություն դիմած քաղաքացիների խնդիրները հիմնականում վերաբերել են (իրավունքները խախտող են հանդիսացել) հետևյալ մարմիններին.***

- ✓ Պաշտպանության նախարարություն,
- ✓ Անշարժ գույքի կադաստր,
- ✓ Ոստիկանություն,
- ✓ Դատական ակտերի հարկադիր կատարման կոմիտե,
- ✓ Դատախազություն,
- ✓ Ընդհանուր իրավասության դատարան, Վերաքննիչ դատարան,
- ✓ Տեղական ինքնակառավարման մարմիններ,
- ✓ ՀՀ ազգային արխիվ,
- ✓ Սոցիալական ապահովություն՝ գործազրկության և կենսաթոշակների նպաստներ,
- ✓ Բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողով:



59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am
Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am

## *2. Ռազմավարական դատավարություններ*

2012 թվականի ընթացքում կազմակերպության կողմից իրականացվել են թվով 18 ռազմավարական նշանակություն ունեցող գործեր, որոնցից 6-ը նախաձեռնվել են 2011 թ., իսկ 12-ը՝ 2012 թ.: Գործերից 7-ը իրականացվում են Կազմակերպության իրավաբանների կողմից, 11 գործերով ներգրավված են փաստաբաններ: Վերոհիշյալ գործերը վերաբերել են ներքոհիշյալ իրավունքներին.

- ✓ կյանքի իրավունք՝ 1 գործ,
- ✓ արդար դատաքննության իրավունք՝ 6 գործ,
- ✓ խոշտանգումներից և անմարդկային կամ արժանապատվությունը, նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու իրավունք՝ 1 գործ,
- ✓ համայնքի սեփականության իրավունք /ավազանու որոշման վիճարկում/՝ 2 գործ,
- ✓ համայնքի ղեկավարի գործողության (անգործության) ոչ իրավաչափ ճանաչելու պահանջ՝ կապված հավաքների ազատության իրավունքի հետ՝ 2 գործ,
- ✓ ոստիկանության աշխատակիցների գործողությունները ոչ իրավաչափ ճանաչելու վերաբերյալ՝ կապված ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքի հետ՝ 1 գործ,
- ✓ պատվին, արժանապատվությանը գործարար համբավին պատճառված վնասի հատուցման իրավունք՝ 2 գործ,
- ✓ ընտրական իրավունք՝1 գործ,
- ✓ տեղեկատվություն ստանալու (արտահայտվելու) իրավունք՝ 2 գործ,
- ✓ զորակոչիկների իրավունք՝ 2 գործ:

2012 թ. սեպտեմբեր ամսվա դրությամբ կազմակերպության կողմից ստանձնած գործերը քննվել են հետևյալ դատարաններում՝

- Ընդհանուր իրավասության դատարան՝ 11 գործ,
- Վերաքննիչ դատարան՝ 3 գործ,



59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am
Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am

- Սահմանադրական դատարան՝ 1 գործ,
- Վճռաբեկ դատարան՝ 2 գործ:

Ներկայումս 1 գործ գտնվում է քննարկման փուլում, 1-ը՝ նախաքննության, 2-ը՝ դատարան է ներկայացվելու սեպտեմբերից հետո:

Կազմակերպության գործունեության ընթացքում կատարված ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ Հայաստանի Հանրապետությունում զգալի թիվ են կազմում ոստիկանության աշխատակիցների կողմից ձերբակալված, կալանավորված կամ օրենքով սահմանված այլ հիմքով անազատության մեջ գտնվող անձանց նկատմամբ բռնությունները, խոշտանգումները, անմարդկային, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքը: Այդպիսի դեպքերի վերաբերյալ անձանց դիմումների հիման վրա բազմաթիվ գործերով խախտված իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանությամբ զբաղվել է նաև ՀՔԱ Վանաձորի գրասենյակը: Սակայն, հիմնականում հնարավոր չի եղել հասնել արդյունավետ լուծման, այսինքն՝ այդ իրավունքների վերականգնման և հետագա խախտումների վերացման: Նշված խնդիրները լուծելու համար անհրաժեշտություն է առաջանում դրանց միջազգային մակարդակի քննություն և լուծում, քանզի մինչև այժմ ներպետական մակարդակով հնարավոր չի եղել հասնել խնդրի կոնկրետ լուծման:

2012 թ. ՀՔԱ Վանաձորի գրասենյակը 3 գործով գանգատներ և 2 նախնական նամակ է ներկայացրել Մարդու իրավունքների եվրոպական դատարան:

ՄԻԴ ներկայացված գանգատները վերաբերում են.

- ✓ անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունքին՝ 1 գործ,
- ✓ հավաքների և միավորման ազատության իրավունքին՝ 2 գործ,
- ✓ կյանքի իրավունքին՝ 1 գործ /նախնական/,
- ✓ արտահայտվելու ազատության իրավունքին՝ 1 գործ /նախնական/:



59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am
Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am

Քաղաքացու նկատմամբ նախաքննության ընթացում անմարդկային, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի, բռնությունների և խոշտանգումների կիրառման վերաբերյալ մեկ գործով ներպետական ատյանները սպառելուց հետո կազմակերպությանը չի հաջողվել դիմում ներկայացնել Մարդու իրավունքների եվրոպական դատարան, քանի որ անձը հրաժարվել է դիմում ներկայացնել և չի լիազորել կազմակերպությանը հանդես գալ իր անունից[3]:

Տվյալ գործով Կազմակերպությունը դիմել է ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գլխավոր հանձնակատարին՝ օգտվելով ՄԱԿ-ի 1503 ընթացակարգից:

[3] http://hcav.am/events/մուտր-էր-գործել-առանց-մարմնական-վնասվ



59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am
Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am